ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՐԱՄԱՆ

«10» «հոկտեմբերի» 2025 թվական № 665-Լ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 10-Ի N 6-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածով, վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշման հավելված 26-րդ կետի 11-րդ ենթակետով և հիմք ընդունելով վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի ղեկավարի 2025 թվականի հոկտեմբերի 7-ի N /45.7/32603 գրությամբ ներկայացված համաձայնությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի 2020 թվականի հունվարի 10-ի «Շրջակա միջավայրի նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու և բնապահպանության նախարարության գլխավոր քարտուղարի 2018 թվականի օգոստոսի 15-ի N 476-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 6-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանով հաստատված 325-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետի (ծածկագիր՝ 15-32.3-Ղ3-2) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի «2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները» բաժնի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. ապահովում է միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերից ու համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, համապատասխան մարմիններից ստացված տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա ամփոփագրերի կազմման գործընթացը և ապահովում ներկայացումը համապատասխան պետական մարմիններին,»,

2) հրամանով հաստատված 326-րդ հավելվածում՝ շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալի (ծածկագիր՝ 15-32.3-Ղ4-3) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի «2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1.

Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները» բաժնի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5. համակարգում է միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերից ու համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, համապատասխան մարմիններից ստացված տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա ամփոփագրերի կազմման գործընթացը և ներկայացումը համապատասխան պետական մարմիններին,»,

3) հրամանով հաստատված 327-րդ և 328-րդ հավելվածներով՝ միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետների (ծածկագիր՝ 15-32.3-Մ2-(6,7)) քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերի «2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները» բաժնի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6. իրականացնում է միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերից ու համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, համապատասխան մարմիններից ստացված տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա ամփոփագրերի կազմման աշխատանքները և ներկայացնում է համապատասխան պետական մարմիններին,»,

4) հրամանով հաստատված 331-րդ հավելվածով՝ շրջակա միջավայրի նախարարության միջազգային համագործակցության վարչության ավագ մասնագետի (ծածկագիր՝ 15-32.3-Մ4-3) քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի «2. Պաշտոնի բնութագիրը» գլխի «2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները» բաժնի 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4. մասնակցում է միջազգային բազմակողմ և երկկողմ պայմանագրերից ու համաձայնագրերից բխող Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքի վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, համապատասխան մարմիններից ստացված տեղեկատվության և հաշվետվությունների հիման վրա ամփոփագրերի կազմման և համապատասխան պետական մարմիններին ներկայացման աշխատանքներին,»:

10/10/2025

X

ՍԵՐԳՈ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Signed by:.ATANESYAN SERGO 4007880425 Ս.ԱԹԱՆԵՍՅԱՆ

Երևան